



*Handwritten signature*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

No 206-4/2

« 12 » Տեպրեմբեր 2018

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ  
ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 29-ի թիվ 379-Ա/2 հրամանով հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի 17, 18, 19-րդ կետերով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

Ս/թ մարտի 23-ին, ժամը 16.00-ին հրավիրել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նիստ՝ հետևյալ օրակարգով /անցկացման վայրը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3/՝

ՀՀ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվելիք ծրագրեր՝ կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդման համատեքստում /զեկուցող՝ ՀՀ ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյան/:

**ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՆԱԽԱՐԱՐ՝**

**ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

